ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԲՆ-ԴՇ-15/02

ք. Երևան «26» « հունվարի » 2015թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ **Խ.Աղաբեկյանի** (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս տնօրենի ժ/պ **Ս.Սահակյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի ծառայություններ»** ծրագրի՝ բաժին 05, խումբ 03, դաս 01, ծրագիր 02 (ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի իրականացման միջոցառումներ) (այսուհետ՝ ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **154 353 200 (հարյուր հիսունչորս միլիոն երեք հարյուր հիսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումար**, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2015 թվականի հունվարի 12-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (հավելված 2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	Կազմակերպություն
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ք. Երևան, Կոմիտաս 29 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Արաբկիր» մ/ճ
ՀՀ 900011007714 ՀԿՀՀ 02507108	ՀՀ 163058569035 ՀԿՀՀ 00079726
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ	«Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ
Ի.Աղաբեկյան	**Ա.Մոսիսյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված № 1
«26» «հունվարի» 2015թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԴՇ-15/02 պայմանագրի

Պետական մարմին

ՀՀ բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կորյունի 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 90001007.14
ՀՎՀՀ 02508.0
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի հ/պ

Ի Պարտեկյան

(ստորագրություն)

Կազմակերպություն

«Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Կոմիտաս 29
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Կոմիտաս» մ/ճ
հ/հ 03000 0350 00 79726
«Շրջակա միջավայրի վրա ներգործության
մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն հ/պ

(ստորագրություն)

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի ծառայություններ» ծրագրի իրականացման

NN հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	ՀՀ մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիտորինգ	ՀՀ մակերևութային ջրերի 6 ջրավազանների, 14 գետավազանների մինչև 55 ջրային օբյեկտների 131 դիտակետերից նմուշառման միջոցառումներ, դաշտային չափումներ, ֆիզիկաքիմիական անալիզներ և որակի գնահատման իրականացում	ՀՀ մակերևութային ջրերի որակի մասին տեղեկագիր. ամսական՝ 12 հատ, տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր, ջրի որակի քիմիական կարգավիճակի 2015 թվականի քարտեզ: ՀՀ մակերևութային ջրերի 6 ջրավազանների, 14 գետավազանների մինչև 55 ջրային օբյեկտների 131 դիտակետերի որակի 2015 թվականի տվյալների բազա՝	1. ՀՀ մակերևութային ջրերի որակի մասին ջրաքիմիական տվյալների առկայություն: 2. ՀՀ մակերևութային ջրերի ջրային օբյեկտների որակի գնահատականների առկայություն: 3. Օպերատիվ հաղորդագրություններ ջրերի «բարձր» և «արտակարգ բարձր» (V դասի) աղտոտվածության վերաբերյալ: 4. Մակերևութային ջրերի որակը բնութագրող ցուցանիշների առավելագույն ցանկ՝ 1. Գույն 2. Ջերմաստճան 3. Հոտ	30.12.2015թ.	**86 652 700**

			40280 ցուցանիշ:	4. Թափանցիկություն 5. Լուծված թթվածին 6. Թթվածնի հագեցվածության տոկոս 7. Թթվածնի քիմիական պահանջարկ 8. Թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջարկ 9. Էլեկտրահաղորդականություն 10. Ջրածնային ցուցիչ 11. Հանքայնացում 12. Կախված մասնիկներ 13. Կոշտություն 14.Հիդրոկարբոնատներ 15. Կարբոնատներ 16. Նատրիում 17. Մագնեզիում 18. Կալցիում 19. Կալիում 20. Ամոնիում իոն 21.Սիլիկան իոն 22. Նիտրիտներ 23. Նիտրատներ 24. Սուլֆատներ 25. Քլորիդներ 26. ֆոսֆատներ 27. ֆոսֆոր ընդհանուր 28 Ֆտորիդներ 29. Պղինձ 30. Երկաթ 31. Արսեն 32. Կապար 33. Քրոմ 34. Կադմիում 35. Ցինկ 36. Մանգան 37. Մոլիբդեն 38. Ալյումին 39. Նիկել 40. Բոր 41. Բերիլիում 42. Սելեն 43. Նիկել 44. Անագ 45. Անտիմոն 46. Սնդիկ 47. Օրգանական ածխածին 48. Ընդհանուր կապված ազոտ 49. ՋԾԴ առաջնային աղտոտիչներ (33) 50. ՋԾԴ երկրորդային աղտոտիչներ (8)		

				51. Նավթամթերքներ (բենզոլ, տոլոլ, քսիլոլ) 52. Քլորօրգանական պեստիցիդներ 53.Դետերգենտներ (անիոնակտիվ, ոչ իոնոգեն) 54. Այլ		
2.	ՀՀ բնակավայրերի օդային ավազանի որակի մոնիտորինգ	ՀՀ բնակավայրերի գետնամերձ շերտի մթնոլորտային օդի որակի մոնիտորինգի իրականացում և գնահատում	1. ՀՀ մինչև 20 բնակավայրի և կարևոր տարածքների օդային ավազանների աղտոտվածության վիճակի վերաբերյալ տեղեկագրեր. ամսական՝ 12 հատ, տարեկան՝ 1 հատ տարեկան ամփոփագիր: 2. ՀՀ մինչև 20 բնակավայրի և կարևոր տարածքների մթնոլորտային օդի գետնամերձ շերտի աղտոտվածության **բաշխման քարտեզ.** շաբաթական՝ 450 հատ, ամսական՝ 120 հատ, տարեկան՝ 18 հատ: 3. ՀՀ մթնոլորտային օդի գետնամերձ շերտի որակի 2015 թվականի տվյալների բազա՝ **490652** ցուցանիշ	1. ՀՀ մինչև 20 բնակավայրերի և կարևոր տարածքների մթնոլորտային օդի գետնամերձ շերտի որակի գնահատականների և աղտոտվածության կոնցենտրացիոն բաշխման քարտեզների առկայություն 2. Օպերատիվ հաղորդագրություններ բնակավայրերի օդային ավազանների «բարձր» և «արտակարգ բարձր» աղտոտվածության վերաբերյալ (յուրաքանչյուր դեպքի համար): Օդի գետնամերձ շերտում որոշվող ցուցանիշների առավելագույն ցանկ՝ 1. Ծծմբի երկօքսիդ 2. Ազոտի երկօքսիդ 3. Ազոտի օքսիդ 4. Ածխածնի մոնօքսիդ 5. Գետնամերձ օզոն 6. Փոշի 7. Փոշու մեջ գտնվող մետաղներ, տարրեր, անիոններ 8. Փոշու մեջ գտնվող օրգանական աղտոտիչներ 9. Ցնդելի օրգանական միացություններ (բենզոլ, տոլուոլ, քսիլոլ և այլն) 10. Կայուն օրգանական աղտոտիչներ 11. Այլ	30.12.2015թ.	**48 572 100**
3.	Ծաղկաձորում շրջակա միջավայրի որակի մոնիտորինգ	Ծաղկաձորի և շրջակա տարածքի մթնոլորտային օդի, տեղումների, փոշու, հողերի և Ծառաղբյուր գետի ջրերի նմուշառում, քիմիական անալիզներ, տվյալների ամփոփում, որակի գնահատում, քիմիական որակի ցուցանիշների կոնցենտրացիոն բաշխման քարտեզների կազմում, տրամադրում: Աջակցություն Ծաղկաձորի որպես միջազգային զբոսաշրջության կենտրոնի վարկանիշի պահպանմանը և բարձրացմանը՝ շրջակա միջավայրի որակի մասին բնապահպանական,	1. Ծաղկաձորի մթնոլորտային օդի գետնամերձ շերտի որակի **տեղեկագիր.** ամսական՝ 12 հատ, տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր՝ 1 հատ: 2. Ծաղկաձորի մթնոլորտային օդի գետնամերձ շերտի որակի գնահատական և աղտոտիչների **կոնցենտրացիոն բաշխման քարտեզ.** Շաբաթական՝ 104 հատ, ամսական՝ 24 հատ, տարեկան՝ 2 հատ:	1. Ծաղկաձորի և շրջակա տարածքի մթնոլորտային օդի, տեղումների, փոշու, հողային ծածկույթի և Ծառաղբյուր գետի ջրի որակի տվյալների, ջրի քիմիական կարգավիճակի գնահատականի, մթնոլորտային օդի գետնամերձ շերտի որակի գնահատականի և աղտոտիչների կոնցենտրացիոն բաշխման քարտեզների, հողային ծածկույթի որակի գնահատականների առկայություն: 2. Օպերատիվ հաղորդագրությունների առկայություն՝ • ջրի «բարձր» և «արտակարգ բարձր» (V դաս) աղտոտվածության վերաբերյալ:	30.12.2015թ.	**5 650 400**

		մոնիտորինգային որակյալ և օպերատիվ տեղեկատվության ստացման, տրամադրման և տարածման միջոցով	3. Ծառաղբյուր գետի ջրի որակի **տեղեկագիր.** ամսական՝ 12 հատ, տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր՝ 1 հատ: 4. Ծաղկաձորի և շրջակա տարածքի հողային ծածկույթի որակի տարեկան **ամփոփագիր**՝ 1 հատ: 5. Տեղումների քիմիական կազմի վերաբերյալ տարեկան **ամփոփագիր**՝ 1 հատ: 6. ՀՀ մթնոլորտային օդի գետնամերձ շերտի, տեղումների, մակերևութային ջրերի, հողային ծածկույթի որակի 2015 թվականի **տվյալների բազա**՝ 4748 ցուցանիշ:ջ	• մթնոլորտային օդի «բարձր» և «արտակարգ բարձր» աղտոտվածության վերաբերյալ (յուրաքանչյուր դեպքի համար): 3. Ծաղկաձորի որպես միջազգային զբոսաշրջության կենտրոնի վարկանիշի պահպանման և բարձրացման աջակցության ապահովում՝ շրջակա միջավայրի որակի մասին բնապահպանական, մոնիտորինգային որակյալ և օպերատիվ տեղեկատվության ստացման, տրամադրման և տարածման միջոցով:		
4.	Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների անդրսահմանային տարածման մոնիտորինգ: Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագիր (EMEP)	Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների անդրսահմանային տարածման մոնիտորինգի իրականացում՝ առաջնային տվյալների ստացում, մշակում, գնահատում, պահպանում, տրամադրում: Հայաստանի կողմից ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի ատոտվածության անդրսահմանային տարածման մասին» կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարում: Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի իրականացում	1. Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների անդրսահմանային տարածման մոնիտորինգի **տեղեկագիր.** ամսական՝ 12 հատ, տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր՝ 1 հատ: 2. Տվյալների տրամադրում Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի **Քիմիական կոորդինացիոն կենտրոնին** (Նորվեգիայի օդի հետազոտությունների ինստիտուտ)՝ պահանջվող ձևաչափով: 3. «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի» շրջանակում Նորվեգիայի օդի հետազոտությունների ինստիտուտի կողմից կազմակերպվող ամենամյա միջլաբորատոր ստուգաճշտման իրականացում: 4. Եվրոպայում մեծ	1. Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների անդրսահմանային տարածման մոնիտորինգային առաջնային տվյալների և գնահատականների առկայություն: 2. Հայաստանի կողմից ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի ատոտվածության անդրսահմանային տարածման մասին» կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարում: 3. Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի առկայություն:	30.12.2015թ.	**8 770 000**

			հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի Քիմիական կոորդինացիոն կենտրոնի և ՀՀ մթնոլորտային օդի որակի 2015 թվականի **տվյալների բազա՝** 17220 ցուցանիշ:			
5.	Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիտորինգ	Արաքս գետի ջրի և հատակային նստվածքի հայ-իրանական համատեղ մոնիտորինգի իրականացման միջոցառումներ՝ նմուշառում և նմուշների ֆիզիկաքիմիական անալիզներ, առաջնային տվյալների ստացում, տվյալների վերլուծություն: Արաքս գետի հայ-իրանական սահմանի հատվածում ջրի աղտոտման հնարավոր աղբյուրների և պատճառների բացահայտում, գնահատում:	1. Արաքս գետի հայ-իրանական սահմանի հատվածի ջրի որակի վերաբերյալ **տեղեկագիր**. եռամսյակային՝ 4 հատ, տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր՝ 1 հատ: 2. Տարեկան **ամփոփ վերլուծության** փոխանակում իրանական կողմի հետ: 3. Տվյալների փոխանակման վերաբերյալ **համատեղ արձանագրություն՝** 1 հատ: 4. Տվյալների համալիր վերլուծության պատրաստում և ներկայացում հայ-իրանական համատեղ ամենամյա նիստի ընթացքում: Արաքս գետի ջրի և հատակային նստվածքի 2015 թվականի **տվյալների բազա՝** 2376 ցուցանիշ:	1. Արաքս գետի հայկական և իրանական ափերի ջրերի և հատակային նստվածքների որակի մասին հիդրոքիմիական տվյալների առկայություն: 2. Արաքս գետի ջրերի որակի վրա աղտոտման կետային ու դիֆուզային աղբյուրների և ճնշման գործոնների ներգործության գնահատականների առկայություն: 3. ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարում: 4. Արաքս գետի և վտակների ջրերի որոկը բնութագրող ցուցանիշների առավելագույն ցանկը. 1. Գույն 2. Ջերմաստճան 3. Հոտ 4. Թափանցիկություն 5. Պղտորություն (NTU) 6. Լուծված թթվածին 7. Թթվածնի քիմիական պահանջ 8. Թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջ 9. էլեկտրահաղորդականություն 10. Ջրածնային ցուցիչ 11. Հանքայնացում 12. Կախված մասնիկներ 13. Կոշտություն 14. Կարբոնատներ 15. Հիդրոկարբոնատ-ներ 16. Մագնեզիում 17. Կալցիում 18. Կալիում 19. Նատրիում 20. Ամոնիում իոն 21. Սուլֆատներ 22. Նիտրիտներ 23. Նիտրատներ 24. Ֆոսֆոր ֆոսֆատային 25. Ֆոսֆոր ընդհանուր	30.12.2015թ.	**4 708 000**

				26. Քլորիդներ 27. Մոլիբդեն 28.Մանգան 29. Պղինձ 30. Երկաթ 31. Արսեն 32. Կապար 33. Քրոմ 34. Կադմիում 35. Ցինկ 36. Ֆենոլներ 37. Նավթամթերքներ 38. Քլորօրգանական պեստիցիդներ 39. Դետերգենտներ (անիոնակտիվ, ոչ իոնոգեն) 5. Արաքս գետի հատակային նստվածքները բնութագրող ցուցանիշների առավելագույն ցանկը՝ մինչև 35 մետաղ:		
ԸՆԴԱՄԵՆԸ						**154 353 200**

Հավելված № 2
«26» « հունվարի » 2015թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԴՇ-15/02 պայմանագրի

Պետական մարմին	Կազմակերպություն
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք. Երևան, Կոմիտաս 29
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Արաբկիր» մ/ճ
ՀՀ 900011007714	ՀՀ 1030056569036
ՀԿՀՀ 02507198	00007926
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի գլխավոր հաշվապահ ժ/պ	«Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրեր

Ծրագրային դասիչը		Մատուցվող ծառայության անվանումը **Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի ծառայություններ**	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
1016	ԱԾ 01	Նկարագրություն Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի իրականացման աշխատանքներ								
Չափորոշիչներ			I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի	I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի
Քանակական		Ջրային օբյեկտների մոնիտորինգ, 5 գոտի, 55 ջրային օբյեկտ (ցուցանիշ)	7040	19200	32000	40280				

Որակական		ՀՀ 6 ջրավազանների 14 գետավազանների մինչև 55 ջրային օբյեկտների 131 դիտակետերում ջրի որակի տվյալներ՝ 30-60 աղտոտիչների վերաբերյալ				X				
Քանակական		Մթնոլորտային օդի մոնիտորինգ, ակտիվ և պասիվ նմուշառում (ցուցանիշ)	112663	255326	357989	490652				
Որակական		Առնվազն 6 քաղաքներում 16 դիտակետերում աղտոտվածության դիտարկումներ մինչև 40 աղտոտիչների վերաբերյալ				X				
Քանակական		Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիտորիգի իրականացում՝ (ցուցանիշ)	594	1188	1782	2376				
Որակական		Արաքս գետի Հայ -Իրանական համատեղ մոնիտորինգ՝ 14 դիտակետ 16-39 աղտոտիչների վերաբերյալ				X				
Քանակական		Ծաղկաձորում շրջակա միջավայրի մոնիտորինգ (ցուցանիշ)	1171	2455	3739	4748				
Որակական		Ծաղկաձորում շրջակա միջավայրի որակի մոնիտորինգ՝ օդի 12-14 դիտակետ և ավտոմատ կայան 4 աղտոտիչների վերաբերյալ, տեղումների, հողերի, Ծառաղբյուր գետի որակի վերաբերյալ ցուցանիշներ				X				
Քանակական		«Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ (EMEP) ծրագրի» շրջանակներում Հայաստանում օդի անդրսահմանային աղտոտման մոնիտորինգի իրականացում (ցուցանիշ)	2609	7704	13099	17220				
Որակական		Կատարվում է համաձայն «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի մոնիտորինգի ղեկավար փաստաթղթերի, EMEP Manual for Sampling and Chemical Analysis. NILU. 2001.				X				
Ժամկետայնության		Համաձայն համապատասխան նորմատիվամեթոդական փաստաթղթերով սահմանված ժամանակացույցի								
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)			X	X	X	X	30871.0	69460.0	108048.0	154353.2

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը
1016 Շրջակա միջավայրի պահպանության, մոնիտորինգի և տեղեկատվական վերլուծական ծառայություններ

Վերջնական արդյունքի նկարագրությունը
Շրջակա միջավայրի պահպանություն, բնապահպանության ոլորտում համակարգչային ցանցի և տվյալների բազայի ստեղծում և պահպանում, մոնիտորինգի արդյունքում խախտումների գրանցում

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը
«Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ